

ՀԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԵՐ

Տարեկան գինն է 7 ռուբլի (իտալի ծախսով): Ծախսարկարար-
ցի բաժանորդները պիտի գումարն այս հասցեով, իսկ Եսթոնացի
ժողովուրդը Բալթիկի Գազետայի Գրասենյակում:
Փոփոխություն կարելի է ստորագրվող խաղաղության մէջ (որոշու-
մով տուն) և Եսթոնացի ընթերցողներին:

ՄԵՍԿԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Մասնաւոր յայտարարութիւն տալի տողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կոպէկ արժեքով: Յայտարարութիւնները
տպւում են չափերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիացի, գերմա-
ներէն և օտարերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

Մասնագրութիւն:—Ինչի մէջ մէկ մէկի չենք հա-
կանում:—Ներքին տեսութիւն: Ղազարի այցելու-
թիւն: Ֆէրրարի բէնէֆիս: Նամակ համախառն: Նա-
մակ բազմաթիւ: Ռուս Ս. Պետերբ. Լրագիրը:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Գերմա-
նիայի պատմական նշանակութիւն: Ֆրանսիա և
սղագրութիւն: Արտաքին լուրեր:—Ֆրանսիա-
կան: Մագլանի հարմարութիւն:—Ռուս լուրեր:
Առևտրական ժամանակագրութիւն:—Յայտարար-
ութիւններ:

ПОДПИСКА НА ГАЗЕТУ
„МШАРЪ“

принимается в Редакцию (Дворц. улица, д. Ар-
друни), а также в библиотеку Иванова.

Желающие внести годовую плату могут адре-
совать ее в Редакцию или в библиотеку Ива-
нова.

Иногородные должны адресовать свои тре-
бования прямо в Редакцию.

ԻՆՉԻ ՄԵՋ ԻՆՉԻ ՄԵՋ ԻՆՉԻ ՀԱՍԿԱ-
ՆՈՒՄ:

I.

Մեզանից ոչ ոք չէ կարող հերքել, որ մեր
հին գրականութիւնը հարուստ է: Մեր հը-
նութեան մէջ ինչպէս հասկանալի էր ժողո-
վրդին մեր լեզուն և գրականութիւնը,—մեզ
յայտնի է: Արքան հաստատ արմատներ ու-
նէր ժողովրդի մէջ մեր հարուստ գրականու-
թիւնը:—յայտնի է մեզ: Արդե՞ք մեր գրա-
բան հին Հայաստանի մէջ ևս ազնուապե-
տական, ընտելանքի լեզուն էր, կամ մատ-
չելի էր ժողովրդի բոլոր դասերին...: Մեզ
միայն այսքանը յայտնի է, որ Մովսէս Խո-
րենացու ժամանակն էլ գաւառական լեզու-
ներ կային: Արդե՞ք սուրբ գրքի և հարե-
ւան աղբերի նշանաւոր գրվածքների թարգ-
մանիչների լեզուն, արդե՞ք հինգերորդ և հե-
տեւեղ դարերի լեզուն միայն գրականական
լեզուն է եղել, կամ մտաւարդապէս այն լեզվով
խօսում էր և այն ժամանակի հայր...: Ո՞վ
կը պատասխանէ...:

II.

Այն ժամանակները անցել են...: Այժմ
մենք առանց սխալվելու կարող ենք հաստա-
տել, թէ ժողովուրդը գրականական լեզուն չէ
հասկանում: Դուք կարծու՞մք, որ ես մի-
այն գրաբանի մասին եմ խօսում,—ոչ: Մեր
նոր գրականական լեզուն, աշխարհաբան էլ
հասկանալի չէ ժողովրդին:

Ի՞նչքան դար շարունակ ժողովուրդը Հա-
յոյ ժամանացութիւն էր լուծւում եկեղեցիներ-
ումը,—և եկեղեցիներից դուրս գալով և
ընտանեկան կեանքը մոռնելով, կրկին խո-
սում էր կամ Վրացերէն, կամ Թիւրքե-
րէն, կամ Յունարէն...:

Վերջին ժամանակները մեր աշխատում
ենք հայի հետ նոր, կենդանի անվանված գրա-
կանական լեզվով խօսել...: Բայց ի՞նչ...:
Մեր գրվածքները չեն կարգում:

III.

Ես մի յօդվածի մէջ ասում էի թէ հա-
սարկական կրթութեան գլխաւոր գործիչ-

ները սօքա են, ժողովրդական (տարրական)
ուսումնարանները, բարձր, մասնաւոր և բազ-
մաբնույթ ուսումնարանները, և—օրագ-
րութիւնը:

Ազգային կրթութեան այդ գործիչները
պիտի ժողովրդի բոլոր դասերը մէկ մէկի հետ
կապեն:

IV.

Ուշադրութիւն դարձրէ՛ք մեր ժողովրդի
գանազան դասերի մէջ փոխադարձ յարաբե-
րութեան վերայ, և դուք կը համոզվէք որ
մեր ազգի դասերի մէջ գրեթէ չկայ հասա-
րակական կապ: Գասերից ամեն մէկը բոլո-
րովն առանձնապէս և այլակերպ է զարգա-
նում: Միակ գործիչը, որ մեզ կապում է
մէկ մէկի հետ,—մեր դաւանութիւնն է:

V.

Գրաբան լեզուն հնացել է: Մենք մի լե-
զուի վերայ պիտի նայենք, որպէս կրթու-
թիւն տարածելու միջոցի վերայ: Երբ որ
լեզուն հնանում է, նորա միջոցով յայնժա-
մ գաղափարներն էլ անմատչելի են դառնում:
Ժողովրդի մեծ մասին, կամ հասկանալի և
հասանելի են լինում գիտնականների մի սահ-
մանափակված, նեղ շրջանին:

Աշխարհաբանը իր կազմութեան միու-
թեանը դեռ ևս չէ հասել: Արեւելեան Հայը
գրեթէ չէ հասկանում Արեւմտեան բարբա-
ռը, և փոխադարձապէս...:

VI.

Այն օրից սկսած, երբ գրաբանը կորցրեց
ժողովրդի վերայ իր կրթողական ազդեցու-
թիւնը, երբ հանգամանքներին հպատակելով
նա ստիպված էր հրաժարվել Հայ հասա-
րակութեան մէջ իրան կրթութեան գործիչ
համարելու,—Հայերը սկսեցին իրանց հա-
սարակական յարաբերութիւններումը օտար
լեզուներ գործածել, հայկական ունեւոր դասը
ուսում ստանալու գովելի պահանջներին
լուծւում տալու համար սկսեց օտար լեզուներին
և օտար երկրներին ուսումնարաններին դիմել:

VII.

Ճշմարիտ է որ մեր հայրենակիցներից շա-
տերը օտար տարրերի կրթութեան օգնու-
թեամբ յայնժամեցան, թէ գիտութեան, թէ
արհեստի, թէ պաշտօնական կեանքի մէջ,—
բայց երբ շարունակ առաջ զնայով մոռա-
րապէս զարգանալով, ունեւոր դասը հեռա-
նում է իր հայրենակից ժողովրդից, օտար է
դառնում օտարին դասի հասկացողութիւն-
ներին և ոգուն,—այն ժամանակ նորա ստա-
ցած կրթութիւնը, ինչքան հաստատ, հիմնա-
ւոր էլ լինէր, գործնալ ժողովրդի դրական
հասկացողութեամբ, անմատչելի է երևում:

Եւ երբ ուսում առանձնեցիկ, երբ բարձր
ուսում ստացածներից մի քանիսը ուղեցան
խօսել կենդանի լեզվով ժողովրդի հետ, ու-
ղեցան ժողովրդի մէջ միտք յարուցանել, նո-
րան սովորեցնել,—նոյա էլ չէր հասկանում ժո-
ղովրդը:

VIII.

Մեզ չէ հասկանում ժողովուրդը, որով-
հետեւ մեր ստացած կրթութիւնը, ինչքան
հիմնաւոր ևս լինէր, հասարակութեան ստո-

րին դասի համար խորթ է երևում, նա
մեզ չէ հասկանում նմանապէս և այն պատ-
ճառով, որ ինքը հիմնաւոր կրթութիւն
չունի:

Ի՞նչ կարող է մեզ կապել մեր օտարին և
վերջին դասի հետ,—տարրական ուսումնարան-
ները:

Առանց ուսումնարանի ազդեցին օրագրու-
թիւնը, զիմեզի գէպի ազգը որը տարրական
ուսում անգամ չունի կը լինի ձայն բարբա-
ռոյ յանապատի:

Ո՞վ են, ո՞ր են ժողովրդական ուսումնա-
րանի ուսուցիչները: Միայն քան ուսուցիչներ
ունենալ, պէտք է պատրաստել նոյա: Բայց
ո՞վ է նոյա պատրաստողը...:

XI.

Կայ մի ուսումնարան մեզանում, որը եթէ
հասկանալի, ընթանէ իր նշանակութիւնը
կարողէր կատարել այդ պաշտօնը և յանձն
առնել պատրաստել ուսուցիչներ:

Ի՞նչ տեսակ ուսուցիչներ կարօտ է ազգը:
Ի՞նչ է նորա առաջին մտաւոր և բարոյական
ամենակարեւոր պահանջները...:

X

Ներքինեան դպրոցը թիֆլիսում պիտի
հասկանայ վերջապէս, որ նորա նշանակու-
թիւնն է պատրաստել ժողովրդի համար ու-
սուցիչներ,—այսինքն,
կրթեալ քահանայներ
և ծխական ուսումնարանների համար վարժա-
պետներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂԱԶԱՐԻ ԱՅՏԵԼՈՒ

Գ.

Ղազարի տեղադրական դրութիւնը տեսնելով,
հարկաւ ամէն մի ընթերցողի և այցելուի առաջին
մտածմունքը պիտի լինի իմանալ պատճառը այդ-
պիտի մի անցարմար տեղ ընտելելու: Եւ արդարեւ
անցարմար էր, եթէ հացի խնդիրը չբաշէր Ղազար
այլքան ժողովուրդը:

Վերել ասացինք, որ Ղազարը պողաւտ և
բեղմնաւոր տեղ է, և իսկ այդպէս է: Ղազարի
մեծամեծ այգիներից դուրս եկած դինին և սպիւր-
աւ և թերթից ու մերձակայ կոստայի ծովից յա-
ռաջ եկած ձկան վաճառաւոր առևտուրը կապում
են Ղազարի ժողովրդին այս քաղաքի հետ:

Ուրեմն ինչքան օգտաւէտ և քանի անգամ ար-
դենաբեր կը լինէր Ղազարի առևտուրը, եթէ յար-
գայ Ղազարեցիք ձեռն ի գործ լինէին հոգա տանել
իւրեանց ճանապարհների, կամուրջների և ամբար-
տակի մասին:

Ղազարի Հայերը, որ բաղկացնում են ժողովուրդ-
դեան մեծ մասը, ամէն տարի տանում են Նիժնի
Նովոքոթի տօնավաճառը մեծ քանակութեամբ
գինի և սպիւրտ ու մեծ մեծ գումարներով վերադառ-
նում: Նոյա գինին հասնում է մինչև Ս. Պետեր-
բուրգ և Ռուսաստանի շատ Հիւսիսային քաղաք-
ները: Իւրեանց առևտուրը աւելի արդիւնաբեր ա-
նելու համար Ղազարեցիք շինել են իւրեանց քա-
ղաքում մի քանի սպիւրտ հանելու շրջաւոր գոր-
ծարաններ, որոնց թիւը մինչև 20 է հասնում:
Բոլոր այս գործարանների կառավարիչները նոյն
խալ իրենց Ղազարեցի Հայերն են: Հնացեալ, որ
ոչ մինը այն պարոններից քիմիադէտ կամ մեքե-
նագործ չէ: Վարժութեամբ նորա հասել են այս

կատարելութեանը, ի հարկէ սկզբումը սովորելով
Եւրոպացի վարպետներից:

Ձիւնալաճառութիւնը նոյնպէս տալիս է Ղազարի
ժողովրդին մեծ եկամուտ: Ղազարից դուրս եկած
ձկնեղէնը և խաւարը շատ տեղեր են գնում:

Բայց այս երկու աղբիւրը հարստութեան Ղազ-
արի արօտատունը միջոց է տալիս ձկնաց մեծ
չոկեր պահելու: Այս և սրանց նման ուրիշ եկա-
մաւ աղբիւրները քաղցրացնում են Ղազարեցիների
համար լինալ նեղութիւնները:

Ղազարի ժողովուրդը զվարարապէս երկու կարգի
կարելի է բաժանել. միջին և աւելի. (ի հարկէ
սրանց մեջն էլ կարգեր կը լինին.) բարձր կամ ա-
րիւստերաւ կոչեցեալ ժողովուրդը այս տեղ չը կոն
կամ շատ աննշան: Միջին կարգի ժողովուրդը,
համարեալ, Հայերն են: Նոյա մէջ աւելի շատ
փոքր է թուով: Ռաւիկը որը է և Ղազարի մշակն
ու գործավարը այդպիսի լեզուն մէջ, բաղկացած է
Նոյալեցից Ղազարեցից և թաթարներից, որոն-
ցից մի մասը քաղաքի և միւսը չրջակայքի բնա-
կիցներն են, վերջինները մեծ մասամբ վրանաբնակ
թաթարականներ: Շատ սակաւ դասիւմ են Ղազ-
արում և Ռուսները:

Հայերի ձեռքին է Ղազարի առևտուրը և հարս-
տութիւնը. այդ պատճառաւ էլ Ղազարը բոլոր-
ովն կարելի է համարել Հայի քաղաքը, և միայն
Հայերն են պարտական իւրեանց հարստութեամբ
թիֆլիսեցի իւրեանց քաղաքի դժբախտութիւնները
և անցարմարութիւնները ամէն կողմից:

Պէտք է խոստովանել, որ շատ անգամ Ղազար-
ցիք կրկնում են.—եթէ այս քաղաքը ունենար օ-
տար ազգի բնակիչք, լինէին նորա մեզանից շատ
աղքատներ, վաղուց բարձրած կը լինէին ամէն
անցարմարութիւնները: Այս բանը, թո՛ղ ներվի
ինձ ասել, պատիւ չէ վերաբերում իմ սրելի հա-
մազայիններին: Թողու՛ք այն դժբախտութիւնները,
որ մեծ գումարների է կարօտ, անհոգութիւնը
մինչև այն տեղն է հասել որ իմ ներկայութեամբս
երկու անգամ բժշկի կողմից ոտախլամութիւնը
խիստ հրաման է արձակել, չը թափել իւրեանց
անամուտը՝ աղքատ փողոցների մէջ և չապականել
օդը և Ղազարեցիք անխիղճ են մնացել: Դիցու՛ք
ներելի լինէր աղքատին, դրաստ կամ մշակ վար-
ձելու անկարողութիւնից անել այդ. նոյն խալ հա-
րուստների սնունդի առջին սակէ է ապականված:
Որ չէ անցել, որ ես դարձան դեղեցիկ առաւօտը
չըջնէ կամկով քաղաքից դուրս, չը փակէի իմ
քիթս քաղաքի փողոցների դարձահոտութիւնը չը
հոտոտելու համար:

Յառաջ դնանք մենք և փոքր ինչ կը զարմա-
նանք այս պատուական ժողովրդի կողմից այլքան
անխիղճութիւնը: Ընդհանրապէս վերցնելով, Ղազ-
արեցիք բաւականին բացված են, ունին սէր առ
ուսումն, խրեանց որդուց կրթութեան համար չեն
խնայիլ վերջին կոպէկը մոխրելու, ձկնեղէն ունին
դէպի ընդհանրական բարի գործերը, առատ և ջեր-
մաւոր են դէպի կրօնական պարտաւորութիւն-
ները, անխնայ բաշխում են եկեղեցիներին, յար-
գում են քահանայներին, թէպէտ և չը լինէին նա-
քա իւրեանց կոպտանք արժանիք, առանց արտա-
նայաց և մեծ համակրութեամբ օգնում են իւրեանց
թէ դաւաճական և թէ ծխական հոգևոր դպրոց-
ներին, ամէն ուրախութեամբ մասնակցեցին իմ
ներկայութեամբս իւրեանց նոր հիմնադրելու ծխա-
կան աղջկանց ուսումնարանի և ամենայն պատ-
րաստութեամբ խոստացան նպաստել. մի խօսքով
ամէն բարի գործում Ղազարի յետին մարդն էլ
անձնատու է: Բայց թէ ինչն է պատճառ վի-
րիլեալ անխիղճութիւնացը, ևս միայն անհամա-
ձայնութեան եմ տալիս, և եթէ այդ մասին էլ
սխալվում եմ և Ղազարեցիք շատ համաձայն ժո-
ղովրդը են, (որին ամէն սրտով կը փափագէիք),
այս ևս դարձացած եմ մնացել, վասն չի Ղազա-
րեցիք իւրեանց օգուտը շատ լաւ ճանաչող մար-

4.

Միտքայն օրերու մ' արժանեալեանց Զ ԼԶ

IPK **IPK** **IPK** **IPK** **IPK**

Սենքը զխեհեք արդէն որ միջին դարերում
մեն մի զաւառ, ամեն մի երկիր իր սեփաշա-
ան անկախ կեանքով էր ապրում: Ուրիշ
ըկրինքում կարողացաւ շուտով ջնջվիլ գա-
ւառների մէջ զանազանութիւնը: Գերմա-
նիայի տեղադրական, աշխարհագրական դրու-
թիւնը, նորա բնակիչների բարք ու վարքը, չէր
թոյլ տալիս նորան կազմող զանազան մասե-
րն միանալու . . . :

II.

Տասն և ութերորդ դարի սկզբում Յրան-
ժան արդէն բոլորովին միացած էր, նորա-
կենդանութեան Փարիզը շքեղ կեանքով էր ապ-
րուում: Թագաւորի պալատի մօտ գտնուում
մտնելով—հին աւատական իշխանների սերունդ-
ները, որոնք թողնելով գաւառական կեան-
քը, շտապում էին Փարիզ իրանց կարողու-
թիւնը այնտեղ մտնելու համար: Նորա չէին
հոգում իրանց գաւառների զիւղական բնա-
կիւնների մասին, և հետեւում էին Փարիզում
գանազան ուրախութիւններին, պարսպուձիւն
էր նախագահան շքեղարկեսներով, նպաստում էին
արեւարհետիւն և գրականութեանը: Այդ այն
դարն է, երբ Փարիզում կանանց իշխանու-
թիւնը թէ հասարակական կեանքի, և թէ
քաղաքական գործերի վերա, հասաւ իր վե-
րին աստիճանին:

III.

Այն ժամանակ Գերմանիան դեռ ևս կեն-
դրօն չ'ուներ: Հարաւային Գերմանիայի զիւ-
րքը, որի գաւառները բաժանված էին մէկ
մէկից նշանաւոր բարձրութիւններով, աջո-
ղակ չէր միութեանը ձգտելու: Սա պատմա-
կան մի իրողութիւն է, որ տալիս էր կրկի-
րան շանքը աւելի հեշտ են հասնում միութեանը
միջանկ ընդ միջանկով քան թէ սարօտ երկր-
աւանդները: Իսկ Հիւսիսային Գերմանիան, որտեղ
նոր կազմվել էր մի գօրեղ (Թէէս փոքր) զին-
վորական պետութիւնը,—Պրուսիան, համա-
կրկն չէր մնացած Գերմանիային, որովհե-
տեւ բնակիչների ծագումի կողմից մի խառ-
նուրդ էր ներկայացնում, որտեղ սլաւոնական
էր, թէ քաղաքը գեռ ևս մեծ գեր էր խաղում:

IV.

Բոլոր Գերմանիան բաժանված էր 18-դ
դարում բազմաթիւ անկախ թագաւորու-
թիւնների, իշխանութիւնների և դքսութիւն-
ների վերա: Փոքր երկրին աւելի դժուար է
հասնել կենդանականութեանը, քան թէ մեծ
երկրին: Գերմանիայի իշխանների թէ դրա-
մական թէ զինվորական ոյժը այնքան թույլ
է չ'էին էր, որ նորա ակամայ ստիպված էին
իրանց հպատակների հետ ներքին յարաբե-
րութիւններում պատվել թէ գիւղերի և
քաղաքների կառավարչական անկախութիւնը
թէ նոցա մտաւոր, անհատական զարգացումը:

V.

Այդպիսի դրութիւնը իր վատ կողմերն
ևս ուներ, որովհետեւ Գերմանիան այդպէս
բաժանված լինելով, միշտ թող էր օտար
պետութիւնների, այսինքն դրսի թշնամիների
առաջ:

Բայց ուրիշ կողմից այդ դրութիւնը թույլ
էր տալիս նորան կազմող իւրաքանչիւր մա-
սին անհատապէս զարգանալու: Իւրաքան-
չիւր իշխանութիւնը, թագաւորութիւնը,
դքսութիւնը իր մասնաւոր յատկութիւններն
ունէր, իրան սեփական, և հարեւան մասե-
րից տարբեր օրէնքներ թէ հասարակական
թէ քաղաքական: Բերեւք այդտեղ մի ծայ-
րայեղ օրինակ. երբ բոլոր Գերմանիայի երա-
կիրներում վերցրած էին վաղուց մարմնական
պատիժները, նորա մի մասում, Մէկլեմբուր-
գի դքսութեան մէջ, մարմնական պատիժնե-
րը մինչև վերջին ժամանակ պահպանուում էին:
Գերմանիան ոյժ չ'ունէր, որովհետեւ կենդ-
րօն չ'ունէր, արդեւ իր մասերի մէջ բազմա-
տեսակ օրէնսդրութեան դրութեանը:

VI.

Մի ուրիշ վատ հետեանք ևս ուներ այդ
բաժանված դրութիւնը: Նա արդեւ էր լի-
նում Գերմանիայի մասերի մէջ կանանաւոր
հասարակական և անտեսական յարաբերու-
թիւնների համար: Իւրաքանչիւր իշխանու-
թիւնը իր տեսակ դրամ ուներ, իր չափերը:
Այդ դժուարացումներ առեւտրական և հա-
սարակական յարաբերութիւններին: Բայց
սորանից մի երկրից անցնելով միւս երկրի
ամեն քայլի վերա հարկաւոր էր մաքս վե-
ճարել:

VII.

Չրոնանանք այդ բաժանված դրութեան
և լաւ հետեւանքները: Ազգի մտաւոր զար-
գացումը և կրօնական ազատութիւնը շահ-
վում էին այդ դրութիւնից: Ոչ մի երկրում
չէր կարող աջողվել կաթօլիկութեան զեղծու-
մների դէմ բողոքող նոր վարդապետութիւնը,
որքան Գերմանիայում: Հայածված լինելով
Գերմանիայի մի մասում, նա ապաստան էր
գտնում և արմատանում հարեւան, ցեղա-
կից պետութիւններում: 18-դ դարի զիւրու-
թիւնը մեղ միևնոյն երեւոյթ է ներկայաց-
նում: Համարարանները հասարակական հիմ-
նարկութիւններ լինելով, միշտ անկախ էին
միում, պաշտպանված լինելով իրանց դարե-
ւոր աւանդութիւնների զօրութեամբ թույլ
քաղաքական իշխանութեան դէմ: Գիտու-
թեան խօսքը ազատ էր զարգանում նոցա
պատերի մէջ և երբ բացառութեամբ իշխա-
նին աջողվումէր արգելել իր երկրի մէջ ազատ
միտքը, — միևնոյն ազատ միտքը խիղճն ա-
պաստան էր գտնում հարեւան իշխանութեան
տակ գտնվող մի համալսարանում, և կար-
ծես նոր ոյժ էր գտնում ծագելու: . . .

VIII.

1813—1814 թուականներում Նապոլէօն
I-ի իշխանութեան դէմ գերմանական ազ-
գային շարժման մէջ երեւցան Գերմանիայի
քաղաքական միութեան առաջին նշոյլները:
Այնուհետեւ ժողովրդի առողջ դատողու-
թիւնը, ազգային զրականութիւնը, նորա գի-
տութիւնը ձգտում են այդ նպատակին: Նա
առաջ լինում էր քայլ,—բայց փոքր առ փոքր
դառնում էր իրողութիւն: Գերմանիան որ միշտ
թույլ էր օտար թշնամու առաջ, վերջին Յրան-
դերմանական պատերազմի ժամանակ միանու-
մէ և կազմում էր մի զօրեղ քաղաքական մար-
մին: . . .

Նորա զինվորական զօրութիւնը անգամ
նման չէ ուրիշ երկրների զինվորական զօ-
րութեանը: Նա չէ կազմում, ինչպէս ուրիշ
երկրներում, մի առանձին դաս, որին վար-
ձոււմէ տէրութիւնը, որը զանազան արտօ-
նութիւններ է վայելում, որը թշնամական
աչքով է նայում ժողովրդի միւս դասերի
վերա, — այլ նորա զօրքը կազմված է բոլոր
քաղաքացիներից, որոնք պատրաստ են միշտ
պաշտպանել իրանց հայրենիքը և նորա հա-
մար արիւն թափել, որովհետեւ իրանց վայե-
րում են իրանց հայրենիքում քաղաքական և
հասարակական իրաւունքները, և միջոց ու-
նին ձգտել իրանց մտաւոր և անտեսական ա-
զատութեան զարգանալուն:

IX.

Գերմանիայի մէջ այնքան արմատացած է
իր կազմող մասերի անկախութեան յիշա-
տակը, մասերից ամեն մէկը այնքան առանձ-
նութիւններ և անհատական իրաւունքներ
ունէր, որ միանալով անգամ Գերմանիան եր-
բէք չի կազմել խիստ միապետական և կեն-
դրօնական պետութիւն — այլ միացած էլ
լինելով միշտ կրճատ դաշնակցական պետա-
կան ձևին:

Միայն ցանկալի է, որ ապագայում պա-
հելով իր մասերի անհատական կեանքից
մնացած արժանաւոր կողմերը, նա վերջին
անկենդանականութեան վատ կողմերը:

Իր կազմակերպութեանը նայելով, Գեր-
կարող է հասնել իսկ այն ցանկալի դրութեանը,
որին չը կարողացաւ հասնել Յրանսիան. թող-
նելով տէրութեանը քաղաքական կենդրոնա-
կանութիւն, միջոց առ ժողովրդին (համայն-
քին, զիւղին, քաղաքին) կառավարչական իրա-
ւունքներ սեփականացնելու, և մտաւոր ու
հոգեւոր ազատութեան իրաւունքներ ձգտելու:

ՅԲԱՆՍԻԱՆ ԵՒ ՆՈՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ

Հեռու չէ վերականգնուիլ այնպիսի հարուածից
յետոյ, ինչպէս էր Յրանսիայի ստացած վերջին
ժամանակի հարուած, նամանաւոր դժուար է
կրբ որ իշխանութիւնը այնպիսի մարդկերանց ձե-

ւին է, ինչպիսի են Յրանսիայի այժման կառա-
վարութիւն և ազգային ժողով կազմող անդամ-
ները:

Պատերազմը ցոյց տուեց Յրանսիայի պետական
ձևի և հասարակական կեանքի ամեն պակասու-
թիւնները: Ողջ աշխարհը հասկացաւ, որ Յրան-
սիայի կորուստի պատճառները խոր արմատներ
ունին նոյն իսկ ֆրանսիական ազգի մէջ:

X.

Այս ազգը ընդհանուր ձայնատուութեան իրա-
ւունք ունի, ուրիշ խօսքով իւրաքանչիւր Յրան-
սիացի մասնակից է տէրութեան գործերի մէջ,
պատգամաւորներ (տուրախներ) ընտրելով, և այդ
ընտրողութեան իրաւունքը վայելելու համար նո-
րանից չէ սահմանվում, ինչպէս ուրիշ երկրնե-
րում, մի նշանակված արդիւնք բերող կայք, կամ
մի նշանակված պարագմունք ունենալ:

X.

Բայց ինչպէս էր գործածում ֆրանսիական ազ-
գը այդ թմազային իրաւունքը, ում էր տալիս իր
ձայնը իր հաւատութիւնը. . . Նապոլէօնին, այն
իսկ Նապոլէօնին, որը այդքան դժբաղդութիւննե-
րի պատճառ է եղել Յրանսիայի համար: Ինչ պատ-
գամաւորներ էր ուղարկում նա ազգային ժողովը,
այնպիսի մարդկերանց, որոնք տէրութեան գործ-
ղութիւններին վերաբնութիւն անելու տեղը, դառ-
նում էին նորա խոնարհ ծառաները:

X.

Բայց ժողովրդի այդ տեսակ վարմունքի պատ-
ճառը ինչ էր: Այստեղ էր արդեւ ազգի ժողո-
վորդը ուրիշ կերպով վարվել, կարող էր նա ար-
դեւ ճանաչել մարդկերանց և գնահատել նոցա
հասարակական գործունէութիւնը: Ոչ, նա չէր կա-
րող,—որովհետեւ սորա համար պահանջվում էր այն,
ինչ որ նորան պակաս էր. մտաւոր զարգա-
ցումը:

X.

Նապոլէօնական Յրանսիային պակաս էին ու-
սումնարաններ և, և ի՞նչ կային մի քանիսնե-
րը, նոքա Աթլօլիկ հոգեւորականութեան ձեռնին,
այն հոգեւորականութեան ձեռնին, որը ժողո-
վորդի զարգացումը վտանգաւոր է համարում. . .
Այդ է պատճառը, որ Յրանսիան այն սակաւա-
թիւ եւրօպական պետութիւնների կարգում պիտի
համարվի, ուր որ գիւղերում կարգալ—գրել իմա-
ցող մարդը հազուադիւր էակ է:

X.

Ինչ պիտի անէ Յրանսիան այս վերջին ժամա-
նակները ծանր և զգալի փորձերից օգուտ քաղե-
լու համար: Պատասխանը շատ հասարակ է. Յրան-
սիայի ժողովրդը, ընդհանուր ձայնատուութեան
իրաւունքի զօրութեամբ մասնակցում էր իր հայ-
րենիքի կառավարութեան գործերի մէջ,—բայց նո-
րա այդ մասնակցութիւնը շատ անգամ կամ ա-
պարդիւն էր մնում, կամ վատ հետեւանքներ ու-
նեցաւ, քաղաքացիների մտաւոր և հասարակական
տնտեսութեան պատճառով:

X.

Որքան տուէք նորան այն, ինչ որ նորան պա-
կաս է, տուէք նորան ուսումնարաններ, որ-
տեղ նա կը սովորի կարգաւ և գրել, և որտեղ
փոքր առ փոքր կը զարգանայ նորա հասարակա-
կան հասկացողութիւնը: Բայց կարելի է ժողո-
վորդը չը հասկանալով ուսման օգուտը չուղարկէ
երկրաներին ուսումնարան,—այն ժամանակ տո-
պեքէք ծնողներին իրանց երեխաները ուսումնա-
րան ուղարկելու, հրատարակեցէք օրէնքներ, ո-
րոնց զօրութեամբ իրանց երեխաներին ուսումնա-
րան չուղարկող ծնողները կը պատվին: Եթէ ժո-
ղովրդը ազգաւոր է, և անկարող է նորահաս սե-
րունդի կրթութեան համար վճարելու, թող ոչինչ
չը տա, թող տէրութիւնը յանձն առնէ այդ ծախ-
սը: Բայց մի կրկնէք ինչ սխալը, մի թույլ տաք
կաթօլիկ հոգեւորականութեանը, որը ամեն բանի
մէջ իր անձնական շահն է պտուտում, ազգեցու-
թիւն ունենալ ուսումնարանի վերա.—եթէ ոչ, ու-
սումնարանը ժողովրդին զարգացնելու տեղ կը տա-
րածէ ընդհակառակն տղիւնութիւն և թերահաւա-
տութիւն և ազգը դժ էր լինի եղբիւրականութեան:
Մի խօսքով, ընդունեցէք Յրանսիայում ձրի, պար-
տաւոր և աշխարհական ուսում: Այդ ուսման մէջն
է Յրանսիայի մտաւոր և հասարակական զարգաց-
ման ապահովութիւնը:
Գրեթէ այս խօսքերով խօսեցաւ Գամբետան
Սան-Կանտէնում:

X.

Այդ ճշմարտութիւնը այնքան չափելի է, որ
ինքն ժողովրդը սկսում է հասկանալ նորան:
Յրանսիան բաժանված է 80 նահանգների (դէ-
պարտման). որոնցից իւրաքանչիւրը ունի իր խոր-
հուրդը: Այդ խորհուրդները կազմուած են ժողո-
վրդի զանազան դասերից, — վաճառականներից,
արվեստագիտներից, ուսուցիչներից և այլն: Եթէ

այդ թուում չը հաշվենք մինչև այժմ դերմանական
զօրքով բռնած նահանգները և այն նահանգները,
որոնք հրաժարվեցան ժողովրդական ուսումնարան-
ների հարցը քննելուց,—կը մնան 69 խորհուրդներ,
որոնք արժանի համարեցին այդ հարցով պարա-
պելու:

Սոցանից 17-ը պահանջում են, որ ուսումը լինի
պարտադիր (օրենսդատէլի). 27-ը կամենում են, որ
նա լինի պարտադիր և ձրի, 8-ը պահանջում են,
բայց վերը յիշած պայմաններից, որ հոգեւորակա-
նութիւնը զրկված լինի դատաւարութեան մէջ մաս-
նակցութիւնից,—այսինքն որ ուսումը լինի աշխար-
հական:

Այս այսպէս է հասկացել ժողովուրդը իր դրու-
թիւնը: Բայց ինչ աչքով է նայում այդ խնդրին
ազգային ժողովը:

X.

Ազգային լուսաւորութեան նախարար պ. Ժիւլ
Սիմօնը,—որի բարի սիրտը նորա զխաւոր արժա-
նաւորութիւնն է, — տեսնում է Յրանսիայի փր-
կութիւնը վերանորոգութեան մէջ: Քանի մի ա-
միս առաջ նա առաջարկել է ազգային ժողովին
այդ վերանորոգութեան վերաբերեալ մի նախա-
դիմ: Բայց մինչոյն ժամանակ, ճանաչելով ազ-
գային ժողովի ուղղութիւնը, նա իր նախագիծ մէջ
բաւականում է պահանջել ձրի և պարտադիր ու-
սում, մի խօսք չափելով նորա աշխարհական լի-
նելու կարելութեան վերա:

X.

Բայց կաթօլիկ հոգեւորականութիւնը հետեւում
է, նա իմանում է, որ այդ նորոգութեան ընդուն-
վելու հետեւանք կը լինի ժողովրդի զարգացումը:
Նա գիտէ որ մտաւոր զարգացման հետեւանքը պի-
տի լինի նորա ազգեցութեան և իշխանութեան
կորուստը, նորա անկումը, նորա մահը: «Ձեր ա-
ռաջարկութիւնը,—գտնում են կղերականները ազ-
գային ժողովում, — անհաւատութեան քարոզ է,
անբողջ նախազգում միայն մի անգամ է յիշուած
Աստուծու անունը, այն էլ վերջումը: Գոյք ու-
ղում էք ֆրանսիական ազգը կործանել»:

Նորմանդիայի, Բրէտանի և ուրիշ գաւառների
եպիսկոպոսները և զանազան հոգեւորականները ու-
ղարկում են ազգային ժողովին անթիւ խնդրներ,
որոնց մէջ առաջում են չը հաստատել պ. Սիմօնի
նախագիծ կանոնները, որոնք նոցա կարծեւրով
պիտի ոչնչացնեն Յրանսիայում այժման «ազատ
և կրօնական» դատաւարակութիւնը: «Ձրի ուսու-
մը յեղափոխութեան աղաղակ է, նա առաջարկ-
մութեան լաւփանիչ կը դառնայ»—ասած է խըն-
դերներից մէկումը:

X.

Ինչ է անում ազգային ժողովը:
Նա ընտրում է մի մասնաժողով, որին յանձնում
է հիմնաւորապէս քննել այդ հարցը: Բայց ով են
ընտրված մասնաժողովի անդամները.—կղերական-
ները, և նոցա մէջ զխաւորը արքեպիսկոպոս Գիւ-
պանլու: Ինչ վիճակի կենթարկվի պ. Սիմօնի ա-
ռաջարկութիւնը, — հասկանալի է ամենակարճա-
տես մարդին:

X.

Բայց Յրանսիան տանջվում է, նորա վերքերը բաց
են և սահանջում են հոգս ու բժշկութիւն: Այս
ամէնը հասկանում է ազգային ժողովն էլ: Եւ անա
վիշլին նիստերի մէկի մէջ լարձարանում է ամբիօսի
վերա Բրիւնէ անունով մի պատգամաւոր,—և ա-
ռաջարկում է կառուցանել Փարիզի կենդրոնում
մի տաճար որտեղից պիտի վերածառնայ դէպի
Աստուած աղօթք Յրանսիայի փրկութեան համար:
Ազգային ժողովը հանդիսատէս լուծ է այդ առա-
ջարկութիւնը և լսելուց յետոյ յանձնում է նրան
այն մասնաժողովին, որին յանձնվում են ամենա-
կարեւոր, անմիջապէս քննութիւն և վճիռ պահան-
ջող առաջարկութիւններ:

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒԻՐԵՐ

— Ինչպէս յայտնի է, Յրանսիայի քանի մի գա-
ւառները դեռ ևս բռնած են գերմանական զօր-
քերով, մինչև որ Յրանսիան վճարէ Գերմանիային
պատերազմից յետոյ պահանջած դուժարի մնացոր-
դը: Այժմ ամեն սուղ ստորագրութիւններ են ա-
նում Յրանսիայիցները, որ աղաւտն իրանց հայ-
րենիքը և հաւաքեն շուտով պահանջած գումարը:
Յրանսիական «Le Temps» լրագիրը պատմում
է զանազան մանրամասներ այդ ստորագրութեան
վերաբերութեամբ: Մի կին, օրինակ, ուղարկել է
այդ նպատակով կազմված մի մասնաժողովին 100
ֆրանկ, որ առաջ նա նուիրում էր իր մարդի ըն-
ծայի համար: Մի պաշտօնեայ իր ամբողջ տար-
վայ ուժերից (1800 ֆրանկ) հրաժարվել է մինչոյն
նպատակով: Փարիզի մի գործարանի մշակները
հրաժարվել են մի օրվայ ուժերից և յանձնել են
մի մասնաժողովին 800 ֆրանկ.—և այլն: Ամեն

